

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷԴ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ ԻՐԱՆԱՑ

Շնորհաւորում ենք Ձերդ Մեծութեան թագադրութիւնը։ Օրհնում ենք Ձեզ և մաղթում երկար և փառաւոր կեանք թագաւորելու Ձեր նախնեաց վեհապանծ գահի վերայ։ Ձերդ Մեծութեան խնամոցն ենք յանձնում Մեր հօտի այն հատուածը, որ բաղդ ունի Ձեր հպատակը լինելու։

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթուղիկոս
ամենայն Հայոց ԳԷՈՐԳ Ե.

Յուլիսի 8-ին Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում մեծ շուքով կատարուել է ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷԴ Շահի թագադրութիւնը։ Ազգիս Վեհափառ Հայրապետն ուղարկել է Շահի թագադրութեան առթիւ վերոյիշեալ շնորհաւորական հեռագիրը։

Երիտասարդ ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷԴ Շահը ծնուել է 1896 թ. Թաւրիզում, երբ նորա հայր նախկին Շահ Մուհամմէդ Ալին թագաժառանգ էր։ Ներկայումս ՍՈՒԼԹԱՆ Ահմէդ Շահը 18 տարեկան է։ Նա ներկայանում է Ղաջարների ցեղից 7-րդ Շահը։ Երբ Մուհամմէդ Ալի Շահին 1909 թ. օգոստոս ամսին հեռացրին գահից՝ անմիջապէս Շահ հրատարակուեց ՍՈՒԼԹԱՆ Ահմէդ դեռ ևս 13 տարեկան հասակում։ Նա իւր կրթութիւնը ստացել է Թեհրանում։ Գիտէ մի քանի օտար լեզուներ, որոնցից աւելի յաջող հասկանում է ֆրանսերէն լեզուով։ Երիտասարդ Շահը սահմանադրական ձգտումներ ունի և համոզուած է՝ որ միայն լաւ հիմունքներով կազմուած սահմանադրական իշխանութիւնը կարող կը լինի զոհացնել ժողովրդեան։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ գերապատիւ Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց աբեղայ ձեռնադրել Տաճկաստանցի Յովհաննէս Ղ. Կարապետեանին։ 3 յունիսի, թ. 803։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր Վահան վարդապետ Տէր Գրիգորեանի մայիսի 31-ի, թ. 23 յայտարարութեամբ ներկայացրած յօգուտ Դպրոցական ֆօնդի մի հազար (1000) ռուբլին Ս. Խաչ վանքի արդիւնքից։ 7 յունիսի, թ. 812։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմածնի Սինօդին նոյն Վահան վարդապետ Տէր Գրիգորեանի մայիսի 31-ի, թ. 24 յայտարարութեամբ ներկայացրած Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ճեմարանի օգտին հինգ հարիւր (500) ռուբլի նոյն վանքի արդիւնքից։ 7 յունիսի, թ. 813.

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով հաստատուեցին Հոգևոր Դպրանոցի